

# ԱՆՈՐԻՇ ԴԵՐԲԱՅԻ ԳՈՐԾԻԱԿԱՆ (Նորայր Ն. Բիւզանդացու անտիպներից)

Ծանօթութիւն.— Այս անտիպը Նորայրի դիւանում է, Թղթ. 8:օ, 9:1-30, Վաւ. 9:23, մի տետրում, որի էջերը համարակալուած են 1-23, ըստ որում բոլոր էջերը լրիւ գրուած չեն, իսկ էջ 20-ը եւ 22-ն դատարկ են: Սա հեղինակի քերականագիտական մի քանի աշխատանքներից է. Նորայրը մեծագոյն մասամբ բանասէր եւ բառարանագիր է: Նա այս գործում չի սպառել անորոշ դերբայի գործածութեան բոլոր դէպքերը, այլ սահմանափակուել է փոխանունաբար գործածուելիս նրա միայն գործիական հոլովով: Նա աչքի առաջ ունեցել է Հ. Արսէն Բագրատունու «Հայերէն քերականութիւնն ի պէտս զարգացելոց» (Վենետիկ, 1852) եւ Վ. Չալըխեան-Ա. Այտընեանի «Քերականութիւնն հայկազնեան լեզուի» (Վիեննա, 1885) աշխատութիւնների համապատասխան գլուխները: Համեմատութիւնից պարզուում է, որ Նորայրի վերլուծումները աւելի նուրբ եւ մանրադաս են, վկայութիւնները մեծագոյն մասամբ դասական գրաբարից են իրենց աղբիւրների նշամբ, որ չկայ նշուած երկու գործերում: Քաջատեղեակ լինելով բոլոր բնագրերին՝ նա բերած վկայութիւնները համեմատում է միւս հեղինակների (կամ թարգմանութիւնների) նոյնանման նախադասութիւնների հետ, ուր ի յայտ է բերում շարահիւսակաւ հոմանիշներ: Նա նկատել է նաեւ իմաստային նրբերանքներ:

Նորայրի այս գրուածքը նրա դիւանի մեր ցուցակի թ. 473-ն է («Բագմալէպ», 1983, 1-4, էջ 62-97):

## ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ ժնեւի համալսարան

1. ԻԲՐ ԲԱՅԱՆՈՒՆ  
(Զրգ. Գեր., է. 198, յ. 463)  
«Գնացին խնդարով (= խնդութեամբ) յերեսաց առնին» (Գործք, Ե, 41). «մեռանել խնդութեամբ» (Բիւզ., Դ, ծգ, 174):  
«Մեծաւ գոչելով (Չ գոչմամբ) զաղաղակ հարեալք» (Ագաթ., 584):  
«Մեծաձայն գոչելով» (Ագաթ., 585):  
«Գոյով արգահատելովդ» (Զրգ., յ. 463):  
Բախելով (= բախմամբ, Զրգ., անդ) մագլոցն պատառեալ զհողմն թեթեւ» (Իմաստ., Ե, 11):  
«Գեղեցիկ տեսանելով» (Գ թագ., Ա, 6), «Գեղեցիկ յոյժ տեսեամբ» (Բ թագ., ԺԴ 27), «Գեղեցիկ տեսեամբ» (Դան., ԺԳ, 31), «Գեղեցիկ ի տեսանել» (Ծնն., Գ, 6):  
«Ներելով առնել զպատուհասն» (Եփես., 2, 9) յորմէ եւ Ոսկ., Ա Տիւմ., ԺԶ, 147: «Ներելով առնել զպատուհասն» (Ոսկ., Մտք., ԽԳ, 633):
2. ԲՈՒՆ ԳՈՐԾԻԱԿԱՆ  
Ընդ որում չմարթի փոխանակել անցեալ դերբայ, եւ պատասխանի է հարցմանցն ո՞րպէ՞ս, զիա՞րդ, որպիսի՞ օրինակաւ: Չալ.-Այտըն., երես 401, ԻԶ:  
«Ասէր հոգալով» (Կորին., 8). «Եւ մինչ նա հոգացեալ վասն իւր ծննդոց մնացելոց զաւակին, եւ վասն այտորիկ հոգալով կայր յաղաւթս առ Տէր» (Բիւզ., Գ, է, 12) ուր դիտելի է խտրական հոգալով եւ անորոշ դերբայի գործիականին հոգալով:  
«Նստելով ունկն դնէին» (Ոսկ., Մտք., ԻԵ, 391). ա՛յլ է «Նստեալ ծիծաղիսն» (անդ, 2, Յորդ. 92). որ եւ ի նստելեաց, որոյ հակառակն է յոտնկելեաց:

- «Չայս այսպէս առնելով՝ զհաւատս նոցա հաստատէ» (Ոսկ., Մտք., ԼԲ, 483):
- «Բաղելով գործեսցես զտապանն» (Ծնն., 2, 16):
- «Խաւսելով ընդ նմա եմուտ ի ներքս» (Գործք, Ժ, 17):
- «Չայս ասելով եւ զմե՛զ թշնամանես» «տէյէրէք, տէյմէյ իլէ» ըստ Չալ.-Այտըն., իսկ «Չայս ասացեալ եմուտ ի ներքս», աշխարհաբար «ըսելով, տէյիպ»:
- «Ասելովն նոր՝ հնացոյց զառաջինն» (Եբր.). «Պատմելով նմա» (Կորին., 3). «Սաստելով նմա» (Ղուկ., ԻԳ, 40). «Չիշելով» (Ոսկ., Մտք., ԺԵ, Յորդ. 236). «Գիտելով եւ կնոջն» (Գործք, Ե, 2), de Genoude «sa femme le sachant». «Չայս ասելով՝ յայտ արարեալ (= առնէ) զինքն Հաւր միաբան» (Ոսկ., Մտք., 625). «Չայս ասելով՝ ոչ եթէ գնուէրս ինչ Աստուծոյ արգելուլ կամիցիմ» (անդ., Ծ, Յորդ. 719). «Եկն առ նոսա գնալով ի վերայ ծովուն» [Մատ., ԺԴ, 25]. «Ոչ գնոսա ինչ յորդորելով առնէր գնչանսն» (Ոսկ., Մտք., ԽԳ, 625). «Հանդերձ ամէնիշխանին Աստուծոյ ծանաւթս առնելով» (Կոր., 3). «Հանդերձ ուսուցանելով մանկունս գրիչս նմին դպրութեան» (Կոր., 10): «Զգտեալ զմարմինն՝ լալով կոծէին» (Թուրք. պոլմայըպ . . . աղլայարագ, Չալ.-Այտըն.) «N'ayant pas trouvé le corps ils se lamentaient en pleurant».

3. ԵՐԱՅԱՑԱԲԱՆՈՒԹԻՒՆ  
(Զրգ. խառն գրէ ընդ բայանուան, երես 198, յ. 463):  
«Տեսանելով տեսի» (Ելք, Գ, 7). «Լսելով լուիջիք եւ մի՛ իմասջիք, եւ տեսանելով տեսջիք եւ մի՛ գիտասջիք» (Ես., 2, 9). «Միթէ քազաւորելո՞վ թագաւորեսցես ի վերայ մեր, կամ տիրելով տիրեսցես մեզ» (Ծնն., Լէ, 8). «Հմայելով հմայէ» (Ծնն., ԽԴ, 15). «Ներկնչելով երկեաւ» (Բիւզ., Դ, 125). «Խնդրելով խնդրեսցես» (Ագաթ., 663). «Պսակելով պսակեսջիք» (Ագաթ., 614).  
Յետագաս, Չալ.-Այտըն., 404:  
«Բացցին բանալով դրունք»<sup>օ</sup>. «Նրթայր երթալով եւ մարգարէանայր» (Թագ., Ա, ԺԹ, 23), de Genoude «il cheminait».  
Որ եւ անցեալ դերբայիւ.  
«Մաշեալ մաշիս» (Եփր.). «Նուազեալ նուազեն ամենայն բանք մեր» (Բրս., Վեց.):

4. ՓՈՒՍԱՆԱԿ ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅԻ  
Ընտանեկան, նման այժմու աշխարհաբարին:  
Ածելով.  
Զմտաւ ածելով. «Զմտաւ ածելով յիշատակարանս առանձին մատենանշան (տես՛ն Կոր. Վրդ., երես . . .) ծաղկեցուցանել» (Կորին., 1). «Զմտաւ ածելով զԱռաքելականն եւ ասէր հոգալով. . . Տրտմութիւն է ինձ եւ անպակաս ցաւք սրտի իմոյ վասն եղբարց իմոց եւ ազգականաց» (Հռ., Թ, 2, 3), նոյն, 8. «Մանաւանդ զի եւ զմտաւ իսկ ածէր ըստ ծերունական (տպ. տէրունական) հասակին զաւր վախճանին» (նոյն, 26): «Արդ՝ զայս ամենայն զմտաւ ածելով» (Մանդ., ԺԴ, 117): «Չայս ամենայն զմտաւ ածելով՝ փախիցուք ի չարեաց, եւ ընտրեսցուք զբարիս» (Ոսկ., Մտք., ԽԲ, Յորդ. 623) = «Չայս ամենայն զմտաւ ածեալ» (անդ, ԺԵ, Յորդ. 235), «Չայս ամենայն զմտաւ ածեալ, . . . զամենայն ինչ փոյթ ի հոգեւորսն ցուցանիցեմք» (անդ, ԽԵ, Յորդ., 659), «Չայս ամենայն զմտաւ ածեալ՝ նախանձաւորք լիցուք գործոց բարութեանց» (անդ, ԽԹ, Յորդ., 711). «Չայս նայն զմտաւ ածեալ՝ մի՛ միայն գովողք լիցուք, այլ եւ ի վախճան իսկ զասացեալսն ածցուք» (Ոսկ., Հռ., ԺԵ, Յորդ. 210). «Բազում խորհուրդս չարս ընդ միտ (տպ. միտս) ածելով» (Ոսկ., Մտք., Յորդ., 621): «Զմտաւ ածեալ զայն որ յԱռակսն պատմի . . .» (Եւթ., Յոջր. Պաւլ., 1107 ա). «Ապա յայնժամ զմտաւ ածեալ երանելուոյն, թէ ոչ այլազգ իցէ զերծանել ի դաւաճանութենէ անտի, թէ ոչ հասեալ յատեանն առ կայր բողոք հարկանիցէ» (անդ, 1109, աբ). «Իբրեւ զլաւ ինչ ածեալ զմտաւ՝ եթէ ոչ զոր կամի ոք եւ խորհի՛ զայն առնէ, այլ զոր ոչն խնդրէ ոք եւ փախչի՛ զայն կրէ» (նոյն, Աղերս, 1223 ա). «Չկայս զելն առաջի ածեալ ընդ միտ» Ագաթ., Յոջր., 7). «Սակայն ածեալ զմահ ընդ միտ (2, իսկ տպ.՝ միտս), յարձակեցաւ» (Բիւզ., Ե, Լէ, 242). «Այսպէս ածեալ զմտաւ՝ թէ հանեալ գնոսա յերկրէն եզրպտացուց» (Ագաթ., 237):

Առնելով.

Յաննան առնելով. «Յաննան առնելով զնոսա եւ զանձն՝ ամենապահ շնորհացն Աստուծոյ, խաղա- ցեալ գայր ի կողմանցն Աղուանից, անցանել յաշխարհն Վրաց» (Կորին, 19-20) = «Զորս յաննան արարեալ շնորհացն Աստուծոյ՝ անդէն զետեղէր» (նոյն, 18). «Յաննան արարեալ զնոսա սրբոյ եպիսկոպոսին Սամուելի, . . . ինքն դառնայր ի կողմանս Հայոց Մեծաց» (նոյն, 20). «Ըստ նմին աւրինակի՝ եւ նորա ապստարեալ (տպ. ապստարեալ) զանձն եւ զմնացեալս՝ ամենապահ շնորհացն Աստուծոյ» (նոյն, 25): «Եւ յաննան արարեալ զնոսա ամենայն իշխանացն եւ զաշխարհն նոցա, եւ ինքն կայսրն չու արարեալ զնաց յերկիրն Յունաց» (Բիւզ., Գ, իւ, 56):

Յայտ առնելով.

«Տեսանե՞ս զմարգարէն, որպիսի՜ ճմարտագոյնս տեղեկացեալ, յայտ առնելով զաստուածական պատիւն Հոգւոյն Սրբոյ» (Ագաթ., 372) = «Շնացողս կոչէ, զառաջին եւ զմաւուսաւոր անհաւա- տուծիւնն յայտ արարեալ» (Ոսկ., Մտք., ԽԳ, 625), իսկ անդ, վերագոյն յայտ արարեալ = յայտ առնէ:

Յուշ առնելով.

«Մանաւանդ յուշ առնելով զտէրունականն . . . , Ակաւ Յիսուս առնել եւ ուսուցանել՝» (Կորին, 23). «(2)աստուածաբար պատուիրանացն հրամանս յուշ (տպ. ուշ) առնելով, զգուշացու- ցանելով ամենայն մարդոյ» (նոյն, 26). «Յուշ առնելով, զի եւ նոցա (ծառայիցն) Տէր զոյ յերկիրն» (Բիւզ., Դ, դ, 76). «ԶԱռաքեալսն յուշ առնելով, որ (ի) պաշտաւն աղքատաց՝ զմեծն . . . Ստե- փանոս . . . ընտրեցին» (անդ, 77). «Արդ եկեալ ի մէջ ժողովրդեանն՝ յուշ առնելով . . . զհրապա- րակախաւս վարդապետութիւնն իւր, թէ նա յայտնապէս խաւսեցայ յաշխարհի» (Ագաթ., 347) = «Իսկ Պաւղոսի . . . ի Միլետոս (տպ. ի Միլետոս, եւ Բ Տիմ., Դ, 20) առաջի համաշուք ժողովրդոցն յուշ արարեալ զասացելոցն . . . » (անդ, 523). «Վասն որոյ զյանցաւորս առ սակաւ սակաւ յանդի- մանեա, եւ որովք մեղանչենն՝ յուշ արարեալ խրատեա» (Իմաստ., ԺԲ, 2):

Փառաւոր առնելով. «Եւ պատահեալ Սահակայ կաթողիկոսի Հայոց, պատմէր նմա զողջութենն եղելոցն, միանգամայն փառաւոր առնելով զԱստուած զմեծանունն՝ Քրիստոսի» (Կորին, 16):

Լինելով.

Փախստական լինելով. (= աշխարհաբար «փախչելով»). «Կերպակերպ նմանութեամբ զիււացն փախստական լինելով՝ անկանէին ի կողմանս Մարաց» (Կորին, 7-8):

Գործակից լինելով. «Կարգացն առաջին հարցն մշակացն փոխանորդ եղեալ՝ գործակից լի- նելով» (Բիւզ., Դ, դ, 74):

Թափանցանց լինելով. «Քանզի եւ հաւատամ, եթէ սրբեալ լիցի հողին . . . , կարէ առաւել թա- փանցանց լինելով ընդ տեսիլս՝ եւ հեռագոյն եւս քան զդեւան տեսանել» (Աթ., Անտ., 42):

Ի չմեղա լինելով.

«Ի չմեղա լինելով չուելոյն առնէր» (Բիւզ., Ե, իւ, 218) = «Ի չմեղա եղեալ՝ կոծ մեծ առնէ» (Սոր., Գ, իւ, 444):

Կորգելով.

«Բազում բանդականաց եւ կալանաւորաց . . . թողութիւն արարեալ՝ կորգելով (տպ. կորգեալ) եւ ի ծան. 1 «Յայլ օրին. կորգելով». կորգելով եւ Սուտ-Կորին, 36, եւ Ագաթ., 629) զնոսա՝ ահաւորութեամբ զաւրութեամբ փառացն (այսպէս Սուտ-Կորին, 36, եւ Ագաթ., 629. իսկ տպ. «հաւաւոր զօրութեամբն») Քրիստոսի» (22):

Յիշելով.

«Զսովորականն առաջի եղեալ զաղաւթս. . . , յիշելով զասացեալսն մարգարէին, եթէ «Յորժամ հեծեծեցես յայնժամ կեցցես»» (Կորին, 9-10). «Յանձն լիցի ձեզ, յիշելով ի ժամանակի՝ երբեք ձերբակալ արասցուք զգաւրսն Յունաց, զբազումս ի նոցանէն ապրեցուցիք» (Բիւզ., Ե, դ, 193). «Զիք որ մարդ եղեալ ի մարդկանէ՝ որ իշխեցեալ է յիշեցուցանել թագաւորաց զոր յայնմ բերով եղեալ զոք է թագաւորաց, յիշելով զայն մարդ՝ որ յայնմ բերով զոք եղեալ է» (Ե, 207):

Յորդորելով.

«Եւ նորա զիւր արուեստն առաջի արկեալ՝ խրատէր յորդորելով» (Կորին, 15). «Եւ առաւել փութայր (Մաշտոց) գուն եղեալ՝ զամենեսեան յորդորելով առ բարեացն քաջալերութիւն» (տպ. «առ բարեացն քաջութիւն». եղի ըստ եկամուտ հատուածոյն Ագաթանդեղի եւ Բիւզանդայ) (նոյն, 26), յորմէ եւ Ագաթ., 658 «Եւ (Գրիգոր) . . . եղեալ զամենայն ոք յորդորելով առ ի բարեացն քաջալերութիւն» եւ Բիւզ., Գ, դ, 13 «Առաւել եւս փութայր (Գրիգոր), գուն եղեալ յորդորելով զամենեսեան առ ի բարեացն քաջալերութիւն»: «Նախ ինքն առնելով առ իւր անձն բարի, եւ ապա այլոց աւրինակ բարեաց դնելով, առ հասարակ վարդապետական բանիւն՝ զամենեցուն զփակեալ դրուես մտաց՝ ի բարին յորդորելով բանայր» (Բիւզ., Դ, դ, 74): «Յառաջագոյն յորդորելով յիւրոց պատուիրանացն ի հնազանդութիւն» (Եւթ., Յոջբ., Գծ., 1047 ք):

Ունելով.

Փոյթ ի վերայ ունելով. «Եւ այնչափ փոյթ ի վերայ ունելով՝ եւ դայեկաբար սնուցանել եւ խրատել, մինչեւ ի նոցունց իսկ ի վայրենեացն եպիսկոպոս տեսուչ (տպ. եպիսկոպոս տեսուչս) եկեղեցւոյն Սիւնեաց կարգեալ, որոյ անունն կոչէր Անանիաս» (Կորին, 14). «Փոյթ ի վերայ ու- նէր» (Ագաթ., 594, 629), «Փոյթ ի վերայ կայան» (Բիւզ., Գ, Ե, 10, տե՛ս Կորին վարդապետ, 104): «Փոյթ յանձին կայեալ» (Եւթ., Յոջբ. Գծ., 1047 ա, Յոջբ. Պաղ., 1108ա). «Այլ փոյթ յանձին կայեալ՝ պահանջել (տպ. պահանջեալիք, Զրգ., Ե. 553, յ. 1244) զամենայն հարկս եւ զհասս, զի մի՛ երբեք բազմասցին»:

Ակն ունելով. «Թոյլ տուք ինձ, . . . զկեանս իմ . . . հանդերձեալ դատաստանին յաւտենից ակն ունելով՝ անցուցանել թերեւս կարացից» (Բիւզ., Դ, դ, 70):

Խնամ ունելով. «Զամենեքումբք ուսուցանէր զսէր, . . . զխնամ ունելով դարմանաց աղ- քատացն տանելոց» (Բիւզ., Դ, դ, 74). «Ընդ Աստուծոյ զխնամն ունելով» (Ոսկ., Մտք., ԽԲ, 618):

Ունելով = «եւ ունէր». տե՛ս ի թիւն 5:

Խառնելով = «խառնեալ».

«Ընդ կենաց դեղն զդեղ մահուն խառնելով» (Բիւզ., Դ, ԺԵ, 123) = «Ի կենաց դեղն զմահա- ցուն խառնեալ, ետ Ողոմպիայ» (Սոր., Գ, իւ, 445):

Խրատելով = «խրատեալ».

«Որ վարդապետութեան բանիւք սնանիցին՝ նախ անձին յաճախ աւզուտ է, զի զայսն խրատելով զիւր միտան քրքրէ» (Ոսկ., Ա Տիմ., ԺԳ, 107) = «Արդ զմեզ խրատեալ՝ զթշնամիսն բերապատիկ տանջես» (Իմաստ., ԺԲ, 22). Թուի թէ ի հատուածաբ ալ է խրատելով, եւ այլ խրատեալ:

Ի մէջ բերելով = «ի մէջ բերեալ».

Ի մէջ բերելով. «Պնդասրտեալ յաւժարագոյնս եւս առնէր զնոսա, զհեթանոսացն եւս ստուծիւնս ի մէջ բերելով, եւ զուխտիցն անցանել եւ զերզմանցն անարգել» (Մկր., Բ, ԺԵ, 10). «Գամաղիելի հաւատարիմ խրատն վասն Առաքելոցն, եւ աւրինակս ինչ ի մէջ բերելով եւ յայտնի առնելով» (Եւթ., Գլուխ Գործոց Առաք., Զ, 1048, ք). այլ է ի մէջ բերելովն յՈսկ., Մտք., ԾԱ, 728: Ի մէջ բերեալ բերեալ. «Յետ այտորիկ ապա զապստամբութիւնն (զամբաստանութիւնն) ի մէջ բերեալ ասելովն, թէ «Ահա Աղամ եղեւ իբրեւ զմի ի մէջ՝ ճանաչել զբարի եւ զչար»» (Ագաթ., 217). «Արդ սրբոցն մարգարէիցն զիրացն զեղելոց զառախս յաճախագոյնս ի մէջ բերեալ, թերեւս եղելովքն ահարկեալ՝ զնոսա յիւրաքանչիւր ամբարշտութեանց փրկել կարացցեն» (անդ, 413). «Ամենայն ուրեք տեսանեմք զՊաւղոս՝ յառաջագոյն ի մէջ բերեալ զպատճառս պատուոյ, ոչ որպէս յափշտակեալ ինչ զպատիւն, այլ յաննան արարեալ նմա, եւ հարկ ի վերայ եղեալ» (Ոսկ., Ա Տիմ., Ա, 3). «Բազում միխթարութիւն տայ համբերողաց զիւրքս՝ զայլս վշտացեալ ի մէջ բերեալ, որ զլանն ընկալաւ ըստ Քրիստոսի խորհրդոցն» (Նխ. Յովբայ, 705ա):

Յառաջ մատչելով = յառաջ մատուցեալ».

«Քանզի եւ ինքն յառաջ մատչելով ասէ՝ թէ ներհակացն ոմանք են՝ որ զինքեանս պատահեաց գող սեռս» (Դ Անյ., Մեկն. Ստորոգ. Արիստ., 417). «Եւ յառաջ մատուցեալ ասէ» (Եւս., Գր. 144, Կորին Վարդապետ, երես 250-251). «Յառաջագոյն եւս մատուցեալ» (Ոսկ., Ես., է. 70). «Յառաջ եւս մատուցեալ» (անդ., 90). «Մատուցեալ յառաջագոյն» (անդ., է, 89, ԺԴ, 152):

5. ՓՈՒՍԱՆԱԿ ԵՒ ՇԱՂԿԱՊԱԻ ԴԻՄԱԻՈՐ ԲԱՅԻ

(Այս գլուխ ի՛մ է:)

Ունելով. «Եւ ինքն կայր քաջութեամբ՝ ունելով զճակատուն տեղի» (Բիւզ., Դ, իե, 146) կամ «Եւ ինքն կայր՝ քաջութեամբ ունելով զճակատուն տեղի». չիք բուժ ի տպագրեսցին. իմա՝ «Եւ ինքն կայր քաջութեամբ եւ ունէր» կամ «Եւ ինքն կայր եւ քաջութեամբ ունէր» (տե՛ս Կորին Վարդապետ, երես 350). «Եկն եհաս մի դեսպան յարքայէն Պապայ առ զաւրաւարն Հայոց Մուշեղ, եւ ունէր առ նա հրովարտակ» (Բիւզ., Ե, գ, 191): «Եւ Յիսուս արտաքս, եւ ունէր պսակ ի փշոց եւ հանդերձ ծիրանի» (Յովհ., ԺԹ, 5), de Genoude «portant», որ է Բիւզանդայ «Եւ Յիսուս արտաքս ունելով . . .». «Այլ հաստատուն հիմն Աստուծոյ կայ եւ ունի զկնիքս զայս, թէ «Մանեաւ Տէր զայնոսիկ՝ որ իւրն են»» (Բ Տիմ., Բ, 19), de Genoude «Mais le solide fondement de Dieu subsiste, ayant pour sceau cette parole». «Թուեաց զնոսա (Ամասիաս զտունն Յուզայ) ի քսանամենից եւ ի վեր, եւ եգիտ զնոսա երեքհարիւր հազար զաւրաւորս, որք ելանէին ի պատերազմ ունելով նիզակ եւ ասպար» (Բ Մնաց., ԻԵ, 5) փոխ. եւ ունէին. յոյնն խροτοϋνιάς = ունողս, տե՛ս խրատեօ Alex, 811գ. «Հասանէ յեզր ծովակի միոյ, որոյ աղի են ջուրքն, մանունս ունելով ձկունս յինքեան, (Պոր., Ա, Ժա, 53), այսինքն «որոյ աղի են ջուրքն, եւ մանունս ունի ձկունս յինքեան»:

Ասելով = «եւ ասէ» (Չալ.-Այտըն., երեսք 403-4, ծան.).

«Ծիծաղեցաւ յինքեան Սարա ասելով» (Փիլ., Լին., Դ, Ժգ, Բնաբան. 257). «Ծիծաղեցաւ Սառա՝ ասելով» (անդ., ԺԵ, Բնաբան. 258) = «Ծիծաղեցաւ Սառա ընդ միտս եւ ասէ. . . Ձի՞ է զի՞ ծիծաղեցաւ Սառա ընդ միտս իւր եւ ասէ» (Ծնն., ԺԸ, 12, 13), յոյնն՝ ἐγγέλασεν δὲ Σάρρα ἐν ἑαυτῇ λέγουσα = «Եւ ծիծաղեցաւ Սառա յինքեան ասելով»:

6. ՓՈՒՍԱՆԱԿ ԶԻ ՇԱՂԿԱՊԱԻ ԴԻՄԱԻՈՐ ԲԱՅԻ

(Զրգ. Գեր., է. 531, յ. 1241, որ խառն գրէ:)

Ունելով = «զի ունիմ».

«Ոգի՛ մարմին եւ ոսկերս ոչ ունի, որպէս զիսս տեսանէք ունելով» (Եփր., Ի յար. մեռելոց (յետ Ոսկերարու), 4, Դ, 156, Զրգ., է. 532, յ. 1241) = «Ոգի՛ մարմին եւ ոսկերս ոչ ունի, որպէս զիսս տեսանէք զի ունիմ» (Ղուկ., ԻԴ, 39):

Ոչ տալով ելս. Բ Մնաց., ԺԶ, 1 = «Զի մի՛ լիցի ելանել» (Գ Թագ., ԺԵ, 17): (Կորին Վարդապետ, երես 407):

Վազելով = «զի վազէր».

«Անդ էր տեսանել նոր զոմն Աքիլեւս ընդ Սկամանդրոս գետ վազելով» (Պոր., Գ, խ., 485), որ է՝ «զի վազէր ընդ Սկամանդրոս գետ». վազեալ, զի վազէր մեկնէ Չալ.-Այտըն., 403, վազող վազեալ մեկնէ Զրգ., է. 532, յ. 1241:

Գիտելով իմ = «զի գիտեմ ես, comme je sais que»:

«Գիտելով իմ, թէ ոչ ինչ ծածկի ի քումմէ թագաւորութենէդ» (Պոր., Բ, Լգ, 234). նոյն բան Լաբուբ. 35 «Զի գիտեմ ես՝ թէ ինչ ի թագաւորութենէդ քումմէ ոչ ծածկի»:

«Այնու զի ոչ եղծ գշարն» (Եզնիկ) (Չալ.-Այտըն., 406) = չեղծանելովն:

«Այնու՛ զի . . . պահանջէ» (Եզնիկ) (Չալ.-Այտըն., 406) = պահանջելովն:

7. ՓՈՒՍԱՆԱԿ ԹԻ ՇԱՂԿԱՊԱԻ ԴԻՄԱԻՈՐ ԲԱՅԻ

(Զրգ. Գեր., է. 531, 532, յ. 1241, ուր խառն գրէ:)

Ունելով = «թէ ունիմ».

«Որ արդարապէս դատի, զարմացման արժանաւոր վարկանի ի շաւիղս միայն տեսանելով զմեզ իմաստութեան, եւ կաթիլ մի ի հոսմանէ եղեմականն ունելով աղբերէ եւ ի հաւատոյ, միայն լինել սահմանի ճամարտութեան» (Ն. Շնորհ., Զրգ., է. 532, յ. 1241, մեկնէ «Իմա տեսանելով զմեզ ունողս կամ ունել կաթիլ մի, եւ լեպս ի սահմանի, այս է՝ թէ ունիմք, թէ եմք»:

Ունելով = «թէ ունին».

«Մանկունք բժշկաց զոտս ճանաչեն ունելով զցաւս անբոյժս՝ ոչ ձեռնարկեն առ այնպիսին» (Ն. Շնորհ., Զրգ. Գեր., է. 532, յ. 1241, մեկնէ «Իմա ունողս զցաւս կամ ունել զցաւս»:

8. ՓՈՒՍԱՆԱԿ ՈՐ ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆԱԻ ԲԱՅԻ

(Այս գլուխ ի՛մ է. Զրգ. խառն գրէ է. 532, յ. 1241:)

Ունելով = «որ ունի».

«Եւ . . . մտաք յճգիպտոս, յաշխարհն համբաւատենչ, . . . ի գեղեցկումն մասին երկրի գլխին ունելով (որ ի գեղեցկումն . . . գլխին ունի) ամենազան պտղովք աուցեալ» (Պոր., Գ, կբ, 549), Զրգ., է. 532, յ. 1241, մեկնէ՝ «գլխին ունող՝ կալեալ»:

Ունելով = «որ ունէր».

«Նա եւ չարիս բազմազանս ամենեցուն հասոյց . . . ցանկասէրս այս եւ գարշելի ալեոր (Լիկիանոս), ներկուածոյ ունելով (որ ներկուածոյ ունէր) զհերս» (Պոր., Բ, ձբ, 367). «Եւ հասեալ (Շապոյ Բ-ի) ի Բեթանիա, . . . սիւն առ ծովուն կանգնէ, եւ առիւծ ի վերայ՝ մատեան ընդ ոտիւք ունելով» (անդ, Գ, ժբ, 431-2) = «եւ առեւծ ի վերայ՝ որ ունէր մատեան ընդ ոտիւք». յերկոսեան եւս տեղիսդ ունող մեկնէ Զրգ., է. 532, յ. 1241:

ՆՈՐԱՅՐ Ն. ԲԻԻՋԱՆԴԱՅԻ